

3185

616.9

S-40

4.226
2191 5914

1911 № 2128

ՐԺ. Ն. ՏԵՐ-ԻՈՇԱՅԱՆ

442

№ 4


Խ Օ Լ Ե Ր Ը

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2002



2010



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Ленинградского
Университета
СССР

Տպարան «Նիբակ» Ալեկսանդրապոլ

1911

616.9
5-40

616.9

S-40

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՊԵՐԱՏԱԿ


Հ Գ

Խ Ր Գ Լ Օ Ի



15005

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՊԵՐԱՏԱԿ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՊԵՐԱՏԱԿ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՊԵՐԱՏԱԿ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՊԵՐԱՏԱԿ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ ԿՈՆՍՊԵՐԱՏԱԿ

ՆՈՒՐՈՒՄ ԵՄ

ՄՕՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ



ԵՄԵԼՈՏԵԿԱ
ԻՆՏԻՏՄԿԱ
ՎՕՏՈՆՎԵԴԵՄԻԱ
Ակադեմիա Մալա
ՍՍՏՐ

49828-ահ



3639/-66

Типография „ШИРАКЪ“ Александрополь

Խ Օ Լ Ե Ր Ը

Չառ ժամանակ չէ, որ անցել է 1892 թուականը: Որևէ 12 տարուայ ժամանակամիջոց բաժանում է մեզ անցեալ համաճարակից: Այն ժամանակ խօլերան յայտնուելով Պարսկաստանում, կեղտոտութեան վայրում, անցաւ Բագու և այստեղից տարածուեց Կովկասի գրեթէ բոլոր քաղաքներն ու գիւղերը: Դեռ լծարմ են մեր յիշողութիւնները այդ խօլերայի մասին: Համաճարակից մեռած հարիւրաւոր մարդկանց յիշատակը դեռ չէ ազօտացել մեր մտքից, երբ յանկարծ վկայ ենք լինելու կրկին նոյն ժողովրդական աղէտին, որը Պարսկաստանում օրական հարիւրաւոր զոհեր տանելուց չբաւականանալով, ներս է մտել մեր սահմանները: Հարևան Բագում արդէն սկսուել է կոտորածը, թէպէտ առ այժմ օրը 10—20 հոգի են մեռնում, բայց երկիւկ կայ, որ կընգունի մեծ ծաւալ, ինչպէս 1892 թւին էր, ուստի ամեն կերպ պէտք է աշխատենք

պաշտպանունը, առաջն առնել, որ նա չգայ, շտարածուի մեր մէջ, վաղաժամ գերեզման գլորելով մեր սիրելիներին: Յայց եթէ, իսպառ նրա առաջն առնել անհնար կլինի, գտնէ հոգանք, որ բիշ թւով զոհեր տանի մեղանից: Այսպիսի վտանգ նախատեսնելիս պէտք է նախ և առաջ գործ դնել նախապաշտպանողական միջոցներ, որ յետոյ ուշ չլինի նրա դէմ կռուելը, — պէտք է գէնուել գիտութեան տուած դէնքերով — բժշկական խորհուրդներով, որ կարողանանք գիտակցօրէն կռուել նրա դէմ: Թէ գիտութիւնը որքան զօրաւոր միջոց ունի համաճարակներին դէմ կռուելու, զրան պարզ օրինակ կարող է համարուել վերջին 1901 թուի ժանդախտը, որ Օգեստայում երեւեցաւ: Կէս միլիոնից աւելի բնակիչ ունեցող քաղաքում միայն 17 հոգի հիւանդացան, իսկ սրանցից միայն 4 հոգի մեռան: Այս թիւը որքան տարբեր է Թէհրանում և այժմ Թաւրիզում մեռնողներին թուից (500—900 հոգի օրական!):

Յայց թէ ինչո՞ւ 1901 թուի ժանդախտն Օգեստայում սեռ ծաւալ շտապաւ և չանցաւ քաղաքից դէպի շրջակայքը, շտարաւ հազարաւոր զոհեր, ինչպէս 1892 թուի խօլերան Բագուում և Երևանում, որովհետև այնտեղ միլիո-

նաւոր ըուրլու ծախսեր շինայելով, անմիջապէս ձեռք առնուեցին բժշկական միջոցներ, որոնց շնորհիւ ժողովուրդը պաշտպանուեց ժանդախտից: մինչդեռ Բագուում և Երևանում այդ միջոցները թոյլ լինելուց, զոհերի թիւն անհամեմատ աւելի եղաւ, քան թէ կարող էր լինել:

Առաջարկելով այս գրքոյն ընթերցող հասարակութեան, կազմողի միակ գիտաւորութիւնն է եղել ծանօթացնել ժողովրդի հասարակ գասակարգին խօլերայի էութեան հետ և տալ խորհուրդներ նրան գիմարելու և նրանից անվնաս մնալու համար:

Վարակիչ թոյներն առհասարակ իրանց աճելու համար նպաստաւոր հոյ են գտնում անմտորութեան, ապականութեան մէջ: Այդ տեսակ թոյներին է խօլերայի ըացելը, որի բուն հայրենիքը Հնդկաստանի Գանգէս գետն է:

Այգտեղի կլիման շատ տաք է, գետի ափերը ճահճային, ափերի մօտ կտտարում են ըրահժական հնդկիների զոհարելութիւնը, որոնց արիւնը նեխում, ապականում է օդը և բազմացնում խօլերայի ու ժանդախտի թոյնը: Երկիրն անպաշտպան լինելով՝ համաճարակը

չուտով տարածուած է չորս կողմ, այստեղից հեշտութեամբ անցնում է Պարսկաստան և շրջակայ երկրները: Գծուար է յուսալ, սր երբ և իցէ Գանգէտի ափերը կը դադարեն վարակիչ հիւանդութիւնների բոյն լինելուց:

Խօյերայի հայրենիքն Ասիայում լինելու պատճառով ընդունեալ է նրան անւանել *Ասիական խօլերա*, միւս տեսակից գանազանելու համար, որը կոչուում *Տեղական խօլերա*, որը համարեա ամեն ամառ պատահում է շոգ տեղերում: Տեղական խօլերան այնքան թույլ է լինում, որ նրան գատում են հասարակ հիւանդութիւնների շարքը:

Ասիական խօլերան՝ շրտականանալով իր գոհերով, որ տանում է իր ծննդավայրում, ժամանակ առ ժամանակ գուշս է գալիս սահմաններից և աւերածներ տաճաջցնում ուրիշ երկրներում. այսպէս օրինակ՝ 1823 և 1838 թուականներին, այնուհետև 1839—42 թուերին մեծ վնասներ հասցրեց Գովկասում, որի յիշատակը մինչև օրս մնացել է ժամանակակից մարդկանց յիշողութեան մէջ: Նոյնպիսի վնասներ տւեց վերջին ժամանակներում յայտնուած խօլերան 1847, 1855—57 թուերին, յետոյ 1865—66 թ. և վերջապէս 1892 թ.:

Խօլերան կաշող, վարակիչ հիւանդութիւն է և եթէ սկզբից հարկաւոր միջոցներ ձեռք չառնենք, մէկ հիւանդը կարող է վարակել մի ամբողջ գիւղ, բաղաք, նոյն իսկ մի ամբողջ երկիր: Բաւական է օրինակ, որ հիւանդի արտաթորութեան մի աննշան մասը կաշի առողջ մարդու ձեռքերին և մի կերպ ընկնի նրա բերանը և ապա կերածի հետ անցնի նրա ստամորսը և աղիքները, այդ մարդը իսկոյն կը վարակուի խօլերայով: Կամ թէ հիւանդի սիրտը քանդուելիս, եթէ մի կաթիլ անգամ թուշի մօտը կանգնողի շրթունքին և նա բանի տեղ չգնի, նոյնպէս ուտելիքի կամ խմելիքի հետ անցնի բերանն ու ապա ստամորսը և աղիքները և ահա արդէն այդ երկորդն էլ վարակուեց:

Այսպէս ուրեմն, անպայման կարելի է վարակուել *հիւանդ արտաթորութիւնից*, *սրտից յետ եկած յորձունքից*, նրա կեղտոտ շորերից և գործածած իրեղէններից, կամ թէ ձեռքից առած բոլոր առարկաներից, որովհետև դժուար է կարծել, որ գրանր ազատ լինեն խօլերայի բացիլներից:


Գարելի է վարակուել առանց հիւանդի հետ միևնոյն սենեակում գտնուելով, բաւա-

կան է միայն գործ զնել հարևան հիւանդ տանից բերած կեղտոտ, վարակուած իրեր, կամ ուտել խօլերայով բուռած հիւանդի խոնութններից զնած մրգերը և այլ մթերքները:

Քայց թէ ինչպէս է մարդ վարակուած, կամ ինչն է պատճառը, որ հիւանդի փխսածի ու արտաթորութեան մի աննկատելի կաթիլն անգամ առաջացնում է այսպիսի սոսկալի հիւանդութիւն. այդ կտեսնենք իսկոյն:

Ելծմ այլևս ոչ մի կասկած չկայ, որ աճմեն մի տարախօսիկ հիւանդութիւն ունի իրան յատուկ ըացելը կամ միկրոքը: Եթէ մէկն արեան մէջ մտցնենք օրինակ, ժանդախտի բացիլը, նա կը հիւանդանայ անպատճառ ժանդախտով: Եթէ երեխային վարակենք գիֆտերիդի բացիլով, երեխան կը հիւանդանայ գիֆտերիդով: Եթէ մէկը վարակուի խօլերայի բացիլով, նա կը հիւանդանայ միմիայն խօլերայով և ոչ թէ ժանդախտով կամ գիֆտերիդով և այլն: Քացիլը հասարակ աչքով անտեսանելի շատ փոքր բան է. նրան հազիւ կարելի է նշմարել խոշորացոյցով գիտելիս, այն էլ մօտ 1000 անգամ մեծացրած: Պրօֆ. Կոխը 1884 թուին խոշորացոյցի օգնութեամբ երկար աշխատելուց յետոյ հաստատեց, որ

խօլերայի թոյնը խօլերային յատուկ ստորակէտի ձեւ ունեցող միկրոքներն են արտադրում: Այդ բացիլները աճում են այնքան արագ, որ մի օրում նրանցից մէկը տալիս է միլիօնաւոր իրանց նման բացիլներ, քսնը իրանց հերթում աճելով 2—3 օրում սարսափելի թիւ են կազմում և մի բանի օրայ մէջ իրանցից թոյն պատրաստելով վարակում են ամբողջ կազմուածքը: Միայն այդ սահաշիւ և արագ աճելի է պատճառը, որ չնայելով բացիլի



Խօլերայի բացիլները մեծացրած խոշորացոյցով 800 անգամ:

աննշմարելի մեծութեանը, շատ շուտ թուրու-
տում է կազմուածքը և կարճ միջոցում մեռ-
ցնում: Վերի բերածս նկարի մէջ բացիլները
մեծացրած են մօտ 800 անգամ ամեն մէկը:

Բացիլի բաղմանալու և թոյն արտադրե-
լու ամենայարմար տարութիւնը 30—40 աստի-
ճանն է, այսինքն համարեա մարդու մարմնի
տարութեան չափը: Նա թէև աւելի բարձրաս-
տիճան տարութեան էլ է դիմանում, սակայն
այդ գրութեան մէջ նա չի կարող աճել, իսկ
եռացրած ջրում անպայման սատակում է:
Զմեռուայ սաստիկ ցրտերը թէպէտ արգելք են
լինում նրանց զարգանալուն, բայց և այնպէս
այդ ցրտերին նրանք չեն սննչանում: Հէնց որ
եղանակը կտարանա, նրանք բարեխաջող պայման-
ներում լինելով, զարթնում են ու զարգանում:
Բացիլների զարգացմանը նպաստող անհրաժեշտ
պայմաններից մէկն է ջուրը եւ խոնաւութիւնը,
այն ինչ առանց դրանց չորութեան մ'էջ նը-
րանք չուտով ոչնչանում են:

Վարակուելու գլխաւոր և համարեա միակ
ճանապարհը քերանն է, այն էլ ուտելիքի ու
խմելիքի միջոցով: Եթէ բացիլները վերայնալ
որնէ կերպով ընկնում են մարդու առողջ ստա-
մորսի մէջ, այնտեղ նրանք ստամորսի հիւթե-

րի զօրութեամբ մարուում, սննչանում են և
հիւանդութիւն չեն առաջ բերում, իսկ երբ
ստամորսը խանգարուած է լինում, բացիլներն
անվնաս անցնում են դէպի ազիքները և այն-
տեղ սկսում են զարգանալ ու թոյն արտադրել:

Սահասարակ խօլերան օդի միջոցով շի-
տարածուում, սակայն խօլերայով հիւանդի սե-
նեակի փոշին կարող է իր հետ բարձրացնել
իր վրայ նստած բացիլը և նորից նստել ու-
տելիքների վրայ (հացի և այլն): Նոյն իսկ օդը
ներշնչելուց նա կարող է մտնել բիթը և անց-
նել ազիքները: Ուրեմն փոշիով լցուած օդը
նոյնպէս վնասակար և վարակիչ է հիւանդի
չրջապատողների համար. այդ պատճառով պէտք
է հոգալ, որ խօլերայի ժամանակ հիւանդի
սենեակում փոշի չբարձրանայ:

Ընդհանրապէս խօլերայի համաճարակնե-
րը լինում են ամառուայ ամիսներում, սրով-
հետի, ինչպէս վերին ասուեց, տարութեան
մէջ (նշ չող արեւի առաջ) նրանք լաւ են զար-
գանում, իսկ ցրտից նրանց զարգացումը կանգ
է առնում:

Թէ կանայք և թէ տղամարդիկ հա-
ւասարապէս հիւանդանում են խօլերայով,
նկատուած է, որ երեխաներն ու ծերերը ա-

ւելի քիչ են ենթարկուած հիւանդութեանը:

Խօյերայով ամենից հեշտ վարակուած են ստամոքսի խանգարում ունեցողները. ուրիշ խօսքով, սոյ սո հոց ուտելուց յետոյ սրտի ծակոցի կամ վրնելու սովորութիւն ունի, որովհետեւ բացիկները ստամոքսումը ընկնելիս, այդ գէպըւած չեն մարսուած: Գրանից հեռուում է, որ խօյերայի ժամանակ պէտք է աշխատել գլխաւորապէս լաւ պահպանել ստամոքսը և նրա խանգարման միջոցին դիմել բժշկի օգնութեան:

Մարմնական ծանր աշխատանքով չպէտք է սպառել ոյժերը և թուլացնել անդամները. պարզ է, որ սրբան մարմինը թոյլ լինի, այնքան հեշտ ենթակայ կլինի հիւանդութեանը: Օրական 12-15 ժամ աշխատողը պէտք է բաւականանայ 8-10 ժամուայ աշխատանքով: Աշխատաւորի թուլացած մարմինը ամրացնելու միջոցներից մէկն է և սնունդի լաւութիւնը, որի շնորհիւ մարմինն ոյժ կստանայ թշնամի բացիկներին դիմադրելու:

Խնձոյքներն ու անկանոն կեանքը վնասակար են խօյերայի ժամանակ: Վարած անկանոն կեանքի պատճառով հետզհետէ թուլանում է մարմինը և շուտ տրամադրուում հի-

ւանգանալու: Արրեցողներն անպայման աւելի հեշտ կենթարկուին վարակման, որի կրքը կլինի անխուսափելի մահը:

Խօյերայով վարակուելու ամենավտանգաւոր ճանապարհներից մէկն է ջուրը: Այլիւրների ջրերը, որոնք պահպանուած են վարակելուց կատարելագործուած խոյսովակների միջով հոսելիս, անվիաս են ընդհանրապէս, ընդհակառակը գետերն եւ ջրհարներն ջրերը շատ վտանգաւոր են: Կանգնած ջրհորները ծծում են իրանց մէջ շրջապատող կեղտոտուած հողի անմաքրութիւնները: Ուրեմն եթէ հարկան արտաքինացնելու միջոցով բացիկներ լինեն, այդ ճանապարհով հեշտութեամբ կարող են նրանք անցնել ջրհորները:

Գետերի ջուրը վիաս է նրանով, որ այնտեղ թափուած են հարկան բազարներից և գիւղերից ամեն տեսակ անմաքրութիւններ, շատ անգամ այդտեղ լացուած են գորգեր, կարպետներ, շորեր և այլն: Բհարկէ համաճարակի ժամանակ լացուած են և խօյերայով հիւանդի շորերը: Բացիկները անցնում են ջրի մէջ, կոչում են տուղջներին կամ խմելուց կուլ գնում հում ջրի հետ և այդպիսով վարակում գործածողներին:

Համաճարակի՛ր ժամանակ պէտք է հոգալ ամենից առաջ, որ ջուրը անվնաս դառնայ, և որովհետև սաստիկ տարուժիւնից ինչպէս վերնատուած է, բացիլները մեռնում են, ուստի անհրաժեշտ հարկաւոր է, որ *գործ ւաճող ջուրը նախապէս եռացուի*, դրանից յետոյ կարելի է հանգիստ սրտով գործ ւածել թէ ուտելիքի և թէ խմելիքի մէջ:

Եթէ հիւանդի արտաթորութիւնը առանց արտահանելու լցնենք դուրս, հոգի միջոցով բացիլները կանցնին ջրհորները և ջուրը վարակելով, վտանգաւոր կը դառնան գործածողների համար: Ուստի պէտք է զգուշ լինել և *Ջրհորների շուրջը չլանալ հիւանդի շորերը*, կամ չը թափել կեղտոտութիւնները առանց արտահանելու նրանց ներքեւում յիշուած միջոցներից մէկով:

Համաճարակների ժամանակ վախկոտ մարդիկ ընկնում են նեարդային դրութեան մէջ, միշտ կասկածը որտեղում, արամադրում են հիւանդանալու: Այդպիսիները վախենում են ուտելուց, խմելուց և ամեն մի շնչին փորացաւ նրանց ահ ու դողի մէջ է ձգում: Նրանք գիշեր ցերեկ հանգիստ չունին, որի շնորհիւ թուլանում է մարմինը և անսնունդ ու անհանգիստ

մնալով, բայրայւում են նեարդերը և հիւանդութեան հասցնում: Ուստի խօրհայի ժամանակ ոչ թէ պէտք է վախենալ, այլ աշխատել խելացի կերպով գիմարել նրան: Մարդ կարող է նոյն իսկ հիւանդաւոր, բայց հէնց ըսկզբից խելացի միջոցներով կարող է անվնաս դարձնել հիւանդութիւնը:

Որպէսզի անտեղի շանհանգստանալ և չը երեւկայել այն ինչ որ խոհապէս գոյութիւն չունի, պէտք է ծանօթ լինել հիւանդութեան իոկական պատկերի հետ:

Խօրհայով վարակուածը մի քանի օր բնաւ չի զգում իր վարակուիլը. այդ օրերը վարակման «գաղտնի շրջան է» ասում. նա երբեմն ունենում է մի փոքր պիտացաւ և ամբողջ մարմնի թուլութիւն, կարծես ջարդուած լինի: Երեք շօրս օրից յետոյ յանկարծ հիւանդը սկսում է սիրտը յետ բերել (փսխել) առանց մի որևէ յայտնի պատճառի, օրի հետ միասին լուծ է սկսում: Լուծը քանի գնում սաստկանում է ու դուրս է տանում հիւանդին մօտ 20-30 անգամ օրը. այդ դրութիւնը տևում է 1—3 օր մինչև հիւանդը ուժասպառ է լինում և չգիտ կէմ, կամ բարեյաջող դէպքում նրա գրո, է գաւկիտում է դէպի լաւը. լուծը կանգ-

նում է և մի քանի օրում նա արդէն առողջա-
նում է: Չնայելով սաստիկ փորլուծութեան,
հիւանդը փորում ոչ մի ցաւ չէ զգում, բացի
աղիքների գոգոսոյից: Քանի լուծը բիշ է,
կղկղանքը թէպէտ ջրալի, բայց իր սովորա-
կան գոյնը ունի, իսկ երբ լուծը սաստկանում
է, կղկղանքի գոյնը դառնում է սպիտակագոյն
ինչպէս բրինձի ջուրը:

Պարզ բան է, երբ մարմնից այգրան հիւթ
է բամուռ, նա պիտի բաշտի, շուրանայ, այդ-
պէս էլ պատահում է: Հիւանդի կաշին կորց-
նում է բնական գոյնը և փափկութիւնը, մար-
մինը սառչում է, ջերմաչափը ցոյց է տալիս 35—
36 աստ., այսինքն բնականից ցած, սրովհետև
թանձրացած արիւնն առաջւայ պէս արագ չի
շարժում երակների մէջ. բերանը շտրանում է,
աչքերը փոսն են ընկնում և նրանց շուրջը
կապում է. հիւանդի մէզը կամ սաստիկ քշա-
նում է կամ բոլորովին կտրւում. շնչառութիւ-
նը դժուարանում է և հիւանդը օդի պակասու-
թիւն է զգում: Նրա կուրծքը սեղմում է,
ձայնը կտրւում, ձևոքերը և ոտները սաստիկ
ցնցում, քաշում են, այս բոլորը ֆեւրու-
թեան ընթացքում, սաստիկ ծարսիւ թշու-
միասին, հանդիստ չեն տալիս խրանհանքի

Այս տանջանքը տևում է 2—3 օր, մին-
չև որ հիւանդը, կամ մեռնում է կամ վերոյի-
շեալ նշանները կամաց-կամաց թուլանում են,
չքանում և մի քանի օրուայ հիւանդն իրան
առողջ է զգում. մնում է ընդհանուր մարմնի
թուլութիւնը, որը շուտով անհետանում է:

Գայ և խօլերայի թեթև տեսակը: Այդ
ժամանակ ընդհանուր թուլութեան հետ միա-
սին օրական 5-10 անգամ լուծ է պատահում
և միաժամանակ մի քանի անգամ սիրտը յետ
է գալիս: Սակայն այս երևոյթը երկար չի
տևում, շուտով կանգ է առնում և մի քանի
օր յետոյ բոլորովին վերջանում է: Այս դէպ-
քում ոչ մարմինն է սառչում, ոչ հիւանդն է
ուժասպառ լինում և ոչ էլ մէզը կապում,
ինչպէս խօլերայի ծանր դէպքում:

Մարտափելի է խօլերայի սրբնթաց տե-
սակը, որը բարեբախտաբար յաճախ չի պա-
տահում: Այս վերջին տեսակի ժամանակ բոլոր
վերոյիշեալ նշանները առաջ են գալիս մի քա-
նի ժամուայ ընթացքում: Յանկարծ հիւանդը
թուլանում, ուժասպառ է լինում. սաստիկ լու-
ծը շատ շուտ սառեցնում է հիւանդի մարմինը
և դեռ կէս օր շանցած՝ նա արդէն անյուսա-
լի է գառնում:

36351-66



Երբեմն պատահում է, որ կարծես թէ հիւանդը առողջանում է. խօլերայի բոլոր նշանները անցնում են, լուծը կանգնում է, սիրտը այլևս յետ չի գալիս, սառած մարմինը տաքանում է, մէզը բացւում, զարկերակը խրվում է իր սովորական ոյժով, հիւանդի ատորժակը բացւում է և այլն. շրջապատողների ուրախութեանը սահման չկայ. մէկ էլ յանկարծ հիւանդի տաքութիւնը սկսում է բարձրանալ մինչև 39-40 աստիճան, սկսում է սաստիկ գլխացաւ, հիւանդը գառանցում է և երեսը կարմրում: Մի բանի օր, երբեմն մի շարաթ այդպէս տևում է, մինչև այդ գրութիւնը կամ անհետանում է կամ քանի փնում սաստկանում է. սրանց վրայ աւելանում է կրկին փորլուծութիւն, բայց այս անգամ սարսափելի գարշելի հոտով, կղկղանքի մէջ խառն են լինում արիւն ու թարախ: Երբեմն էլ դրա վրայ աւելանում է թորերի բորբոքում, կամ հիւանդի կոկորդում պիֆտերիտի վէրքեր են բացւում, մարմնի գանազան տեղերում ուռոյցներ են երևան գալիս և խօլերայից ուժասպառ եղած մարմինը այլևս չի կարողանում տանել նոր վրայ եկած հիւանդութիւնները, այնպէս որ նա անչնշանում է:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԿՐԹԱՆՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ահա սրանք են հիւանդութեան արտաքին նշանները, որ պետք է ճանաչէ իւրարանչիւր մարդ, ով խօլերայի մասին կասկած ունի: Այս նշաններն երևալուն պէ՛ս՝ խկոյն պէտք է բժիշկ հասցնել, որպէսզի նա կարողանայ շուտով միջոցներ ձեռք առնել թէ հիւանդին ազատելու և թէ շրջապատողներին վարակուելու վտանգից հեռու պահելու համար:

Հիւանդութիւն պատահած դէպքում, միայն բժիշկ հրաւիրելով չպէտք է բաւականանալ, այլ անհրաժեշտ է յայտնել այդ մասին և այն սանիտարական մասնաժողովին (санитарная комиссия), որ կազմւում է ամեն անգամ համաճարակ յայտնուելիս:

Որտեղ որ կայ հիւանդանոց, ամենից լաւն է հիւանդին այնտեղ տեղափոխել. հաւատացած եղէք, որ այնտեղ ձեր հիւանդը կը գտնի ամեն յարմարութիւններ բժշկուելու, բացի այդ, տանից դուրս բերելով հիւանդին, նրա ընտանիքը և մերձաւորները ազատուած կլինեն վարակուելու վտանգից: Իսկ որտեղ հիւանդանոց չկայ, հիւանդին պէտք է տանել մի մարուր, չոր և լայն սենեակ, պարկեցնել վափուկ կոզինքի մէջ, տակը տեղաշարի վրայ գցել մի

մեծ կշեռնեցայ (մուշամբա): Եթէ այդ յարմար թիւնները չեն ճարտիլ, լաւ է հիւանդին պարկեցնել խոտ լցրած ներքնակի (գօշակի) վրայ, որովհետեւ խոտը կարելի է այրել և ոչնչացնել կարևոր դէպքում, այսինքն կեղտառուելիս. իսկ վրայի կտորը եռացրած ջրով կամ գեղերով ախտահանել և նորից խոտ լցնել:

Սեղանները, ամանները և ուրիշ իրեղէնները կարելի է լուանալ սուլէյմանի ջրով, թրջած սպունգով կամ շորով:

Հիւանդին խնամոցները պէտք է հագնեն սպիտակ, երկար շապիկ և խոկոյն փոխուլին, եթէ կտակամ լինի, որ հիւանդի արտաթորութիւնով կեղտառուել է, և անմիջապէս եփ տալ ջրի մէջ: Հիւանդապահը ինչպէս իր շարերը, այնպէս էլ ձեռքերը պէտք է գեղերով շուտ-շուտ ախտահանէ:

Հիւանդը առողջանալուց կամ մեռնելուց յետոյ՝ նրա տեղաշորը, տան բոլոր անարժէք և էթանագին իրեղէնները պէտք է այրել, եթէ կտակամ կայ վարակուած լինելուց, իսկ մնացած իրեղէնները ախտահանել հոր կղանակով, որի մասին յետոյ խօսք կլինի:

Եթէ սենեակի յատակը հողից է, կարելի է վրան շոր կիր ցանել:

Հիւանդի կողոնները եւ փխսածը պէտք է իսկոյն լցնել մի փոսի մէջ եւ վրան կրաջուռ անել: Երա շորերը անմիջապէս պէտք է դնելերով ախտահանել եւ ապա ջրի մէջ լաւ եփելուց յետոյ գործածել:

Այդ բոլորը կատարելուց յետոյ, պարտաւարեցուցիչ պէտք է լինի մեզ համար նաև մեռածի դիակը թաղել ուրբան կարելի է խորունկ, յատուկ նշանակամ գերեզմանատանը, իսկ վրան բաւականաչափ կիր ածել:

Համաճարակի ժամանակ ամեն ոք հիւանդութեան նկարագիրը իմանալուց յետոյ, պարտաւոր է գիտենալ նաև, թէ ի՞նչ միջոցներ պէտք է գործ դնել մինչև բժշկի գալը, մանաւանդ անհրաժեշտ է բժիշկներից զուրկ գիւղերում:

Երբ որ մէկը հիւանդանում է, նրան խկոյն պէտք է պարկեցնել, փօրք փաթաթել ֆլանելով կամ ուրիշ բրգէ շորով. խոկոյն ամբողջ փօրի վրայ պէտք է մանանեխի թերթ (ГОРЧУЧНИКЪ) կպցնել, իսկ սաների տակը և կողբերին շարիկ տար շշեր կամ աղիւններ, որ պէտքի փորլուծութիւնից մարմինը շտառչի: Եթէ սիրար շարունակ յետ է գալիս, պէտք է խորհուրդ տալ սառուցի կտորներ կույ տալ

կամ որիէ թթուաշ խմիչք խմել, որովհետեւ խօչերայի բացիլնները թթու հիւթերի մէջ սննդանում են: Իհարկէ, այդ խմիչքները պէտք է պատրաստուած լինեն եռացրած ջրով:

Չեարի տակ միշտ հարկաւոր է ունենալ *Ինոզեմցեովի կամ Բոտկինի կաթիլները* (капли Иноземцева, Боткина) որոնք պարունակում են իրենց մէջ օպիում, թէև քիչ քանակութեամբ: Այս դեղերը պէտք է տալ հիւանդին ջրի հետ, խառնելով 20—25 կաթիլ, իւրաքանչիւր 2 ժամը մի անգամ, մինչև լուծի գաղարեիլը:

Արդէն առուեց, որ հիւանդին տանջող նշաններից մէկն էլ ամբողջ մարմնի ցնցուել, քաշուելն է: Իրանց առաջն առնելու համար, ցնցուող մասերը միշտ պէտք է տքորել կամ շոր բրդէ շորով, կամ կարելի է շորը թրջել քիաֆիրի իւղի (камфорное масло) մանանիխի ուղիի մէջ (горчичный спирт): Հիւանդին խնամուղները պէտք է հեռուեն, որ նրա ձեռքերն ու ոտքերը չսառչեն: Հէնց որ նկատուեց մի այդպիսի երկիր, պէտք է անմիջապէս հիւանդին տաք ջրի մէջ պարկեցնել և կամ պերս յիշուած միջոցներով (չիշերով և աղիւսներով) տաքացնել մարմնի այդ մասերը:

Ուշագնացութեան դէպքում, հիւանդին պէտք է տալ Վալերիանի կամ Յոֆմանի կաթիլներ (Эфирно-Валериановыя капли, Гофманскія капли) 20-ական կաթիլ մի քիչ ջրի մէջ, իւրաքանչիւր 2 ժամը մի անգամ, կարելի է տալ նաև կոնեակ կամ լաւ գինի:

Ցանկալի է, որ ամեն ընտանիք համաճարակի ժամանակ տան մէջ ունենալ յիշեալ դեղերը, որպէսզի հարկաւոր բոլորին ձեռքերը ծալած՝ անօգնական չը մնայ: Այդ բոլորը կարելի է ստանալ գեղատներում տուանց գեղատոմսի:

Հիւանդներին խօչերայի շիճուկով բժշկելու հարցը գեռ փորձնական շրջանում է: Բժ. Խաւկիներ Հնդկաստանում և ուրիշները ահագին քանակութեամբ փորձեր են արել և անում, որոնք առ այժմ ցոյց են տուել, որ շիճուկը ունի նշանակութիւն իբրև նախազգուշացնող միջոց, իսկ իբրև բուժող միջոց գեռ նա բաւականաչափ օյժ չունի. յամենայն դէպս պատաստելուց ոչ մի վնաս չի կարող լինել և ուրախութեամբ պէտք է ընդունել պատաստումն. եթէ առաջարկող լինի:

Որբան որ հարկաւոր է հիւանդին փրկելու համար աշխատել, աւելի ևս կարեւոր է

ուշադրութիւն դարձնել, որ շրջապատող ա-
ստղները չվաճակուին: Պրա համար անհրա-
ժեշտ է, ինչպէս վերեւ ասացի, հիւանդի հետ
բոլորովին կտրել յարաբերութիւնները. նրա
իրերը ախտահանել, որպէսզի կարելի լինի
նրանց գործ ածել առանց վարակուելու:

Փեանի վրայ թափած իրերի ախտահա-
նելու գործնական միջոցներից մէկն է և *կերը*:
Նրան գործ են ածում կամ շոր-շոր, ցանկով
արտաքնններում հիւանդի արտաթորութիւն-
ների վրայ, կամ բացած. նրա 5 ֆունտը 1
վեդրո ջրի մէջ, նոյն նպատակի համար:

Չատ ուժեղ և գործածական է նաև *սու-
լէման*, որը կարելի է ստանալ բժշկի գեղա-
ամսով և գործածել նրա խորհրդով:

Լաւ միջոց է և *կարբոնիւան թթուտի*
(карболовая кислота) ջրախառնուրդը. 1-2
լիէրի զգալ այգ թթուտից պէտք է խառնել
մի թէյի բաժակ ջրի մէջ և սրսկել նրանով
հիւանդի իրերը, սենեակը, կամ լուանալ խնա-
մողի ձեռքերը:

Էժան ախտահանութեան միջոցներ են
նաև պղնձի արջասուրը և երկաթի արջասուրը:
Առաջինից պէտք է 2 մասը խառնել 100 մաս
ջրի, իսկ երկրորդից 15 մասը 100 մաս ջրի

հետ լլինել հիւանդի կողպանքի վրայ և ապա
արտաքննող թափել.

Յացի այս վերոյիշեալ միջոցներից, այժմ
ախտահանիչ գեղերը գոյորշիացնում են զա-
նազան մերենաների միջոցով: Թունաւոր գո-
լորշին թուլնում են սենեակի մէջ 12 ժամ, որը
հաւասարապէս տարածուում է ամբողջ սենեա-
կում, մանում պատերի, յատակի և առաստա-
ղի բոլոր ճեղքուածների մէջ, անցնում է գոր-
գերի, շորերի ամենախորը ծալքերը ու սղա-
նում, բնաջինջ անում բոլոր բացիլիները: Այս
միջոցը թէպէտ նոր, բայց ամենահաստատուն
է և քնդուծուածը. ուստի պէտք է պահանջել, որ
հիւանդի բնակարանը անպատճառ այս միջո-
ցով ախտահանուի:

Այժմ այդ ձևի ախտահանութեան ժամա-
նակ գործածելի գեղը *Ֆորմալինն* է:

Վերոյիշեալ բոլոր գոուչութեան միջոց-
ները մեզ համար պարտաւորեցուցիչ պէտք է
լինեն, եթէ ուղում ենր ազատ մնալ վտան-
գից. իսկ եթէ չնայած ձեռք առած գոուչու-
թիւններին, խօլերան ներս է մանում սահմա-
նից և տարածուում է, մենք պէտք գործ ունենք
հետեւեալ անհրաժեշտ նախապաշտպանողա-
կան միջոցները:

Այդ միջոցներէց ամենատառաջինը մ'ար-
բուլթիւնն է, որովհետեւ ինչպէ՛ս արդէն ասա-
ցինք, խօշորայի բացիլը զարգանում և աճում
է գլխաւորապէ՛ս կեցոտտ տնօգրում, նեխուոյ
նիւթերով ծածկւած խոնաւ հողի մէջ, ինչպէս
են՝ Գանգլ, և նեղոս գետերի ափերը: Նրանք
լիքն են ապականութիւններով, մարդկանց ու
կենդանիների գիւղերով, որոնք արեւի ջեր-
մութեան տակ նեխուելով՝ փտում են և աճե-
ցնում վարակիչ հիւանդութիւնների միկրոօրգան-
ւիւն: Այս բանին քիչ չէ նպաստում և արեւե-
լեան ժողովրդների անմաքրասիրութիւնը:

Ուրեմն ինչպէ՛ս տեսնում ենք, իւրաքան-
չիւր մարդու առաջին հոգսը պէտք է լինի
մաքրութիւնը և բանի պէս չէ սկսուել համա-
ճարակը, մարդ պէտք է մաքրէ իւր շուրջը:

Բաւական չէ իր սեփական տունը մա-
քուր պահել. ընդհանուր մաքրութիւնը պաշտ-
պանելու համար, պէտք է բոլորս միասին հա-
մերաչխ գործենք այդ ուղղութեամբ, չլնանայե-
լով ոչ մի ծախս և աշխատանք:

Թէև քաղաքային վարչութիւնների գործն
է հսկել մաքրութեան վրայ, բայց ամեն բա-
զարացի պէտք է իր կողմից գործին աջակցէ,
համազուտ լինելով, որ իր անձի ապահովու-

թիւնը սերտ կերպով կապուած է գրացու ա-
ռողջութեան հետ:

Ասորաժեշտ է գետինը մարդկանց ար-
տաթորութիւնից մաքուր պահել. դրա համար
հարկաւոր է ունենալ կանոնաւոր, մէջը ցեմեն-
տով սոււալած աքտարնոցներ և ամեն օր այն
տեղ կրաջուր լցնել, խօշորայի թոյնը ոչնչա-
ցնելու համար: Եթէ արտարնոցներում հորեր
ունենալը պժուար է, պէտք է անմաքրութիւն-
ները լցնել տակտաների կամ մէջը ցինկով
կապրած արկղների մէջ և դուրս տանել բա-
զարկից յատուկ դրա համար նշանակած տեղը
թափել. յամենայն գէտս գետինը չպէտք է թըր-
ջել, իսկ եթէ, թրջուի, պէտք է գետնի խոնա-
ւութիւնը խօշոյն շտրպնել չոր կրով: Լւացրի
ջուրը նոյնպէ՛ս ցանկալի է, որ լցուի ցեմեն-
տով շինուած հորերի մէջ, իսկ ծայրահեղ դէպ-
քում կարելի է խառնելով նրա հետ ախտա-
հանիչ դեղերը, զբիւ տալ արեւիոյ տեղերը,
որպէսզի շուտով ցամաքի:

Խօշորայի ժամանակ ընակարանը
պէտք է լինի չոր, լուսաւոր եւ ընդարձակ:

Պէտք է գուռ-կրդիք շուտ-շուտ բանալ օդը
մաքրելու համար. լաւ է ցուրտ, բայց մաքուր
օդում ապրել, քան տաք և անմաքուր օդ շնչել:

Նկատուած է, որ խօլերան կամ ժանդախտը հետևելէ են սովին, պատերազմներին և ուրիշ ժողովրդական ազտներին, երբ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը ստեղծելէ ունեցել, խօլերան վրայ է հասել և միլիոնաւոր մարդիկ կոտորել:

Խօլերայի ժամանակ խեղճ ազրատներին օգնել, կերակրելը ոչ թէ միայն բարեգործութիւն է, այլ նոյնիսկ ինքնապաշտպանութեան մի միջոց, որը անհրաժեշտ է ամեն մէկին:

Այդ է պատճառը, որ միշտ խօլերայի ժամանակ, ամեն տեղ ժողովուրդը ինքը ազրատ դատակարգի համար ձրի ճաշարաններ և թէյատներ են հիմնում:

Համաճարակի ժամանակ մեծ ծառայութիւններ են մատուցանում հիւանդանոցները. միայն ցաւալին այն է, որ ժողովրդի տգէտ մասը հաւատով չի վերաբերում պէլի այս անհրաժեշտ հիմնարկութիւնները և կարծում է, իբր թէ այնտեղ ուղարկում են միմիայն անյոյս հիւանդներին, ուրեմն մտնելուց յետոյ նրանց այլևս դուրս գալ չի կարելի: Ընդհակառակը հիւանդանոցներում կան այնպիսի յարմարութիւններ, որպիսին ազրատներն իրանց տներում ունենալ երբէք չեն կարող: Այնտեղ

թէ բնակարանը, թէ ստեղծելի խմելիքը, թէ պաշտպանողական միջոցները լաւ են և որ գլխաւորն է, հիւանդը միշտ գտնուած է բրձչի հսկողութեան տակ:

Այս էլ պէտք է համարում կրկնել, որ հիւանդին տանից հեռացնելն էլ պակաս բարիք չէ, քանի որ նրա ներկայութիւնը տան մէջ մշտական սպառնալիք է ընտանիքի միւս անդամներին: Հեռացնելով հիւանդին տանից, ղըրանով հեռացրած կլինիք վարակման աղբւրը:

Վերջացնելով գրքոյկս, վերոյիշեալ խրատները, նորից եմ կրկնում, ամփոփելով առանձին կէտերում, որպէսզի աւելի հեշտ լինի միտը պահելու համար:

1) Երբ յայտնուած է, որ մերձաւոր երկրում խօլերան կոտորածներ է անում, քաղաքներում և գիւղերում բանիմաց մարդիկ պէտք է միանան և անմիջապէս միջոցներ ձեռք առնեն մարրելու փողոցները, հրապարակները, բակները, այսոսները. ազրանոցները և մանաւանդ պէտք է կանոնաւորել արտաքնոցները և կեդտոտ ջրերի փոսերը:

2) Ազրերը, արտաքնոցներին անմարրութիւնները, կեդտոտ ջրերը պէտք է անպատճառ տանել գիւղից կամ քաղաքից դուրս մօտ

մէկ վերստ հեռաւորութեամբ և լցնել իշխանութեան կամ բժշկի նշանակած տեղերը, իսկ ինչ կարելի է այրել, անմիջապէս ոչնչացնել:

3) Սենեակներն յուսամուտները պէտք է շուտ-շուտ ըաց անել և օդը մաքրել. այդ նպատակով չպէտք է գործ անել ոչ մի ծխելու միջոցներ, ինչպէս հոտաւէտ մոմեր կամ թղթեր, սրոնք օդը աւելի ապականում են:

4) Պէտք է հետևել, որ վերայիշեալ պահանջները խստութեամբ գործադրեն հացթուխները, մսագործները, միրգ և ուրիշ ուտելու մթերքներ ծախողները, հիւանդանոցների սրբաբանների, բաղնիքների և ուրիշ պանազան գործարանների տէրերը:

5) Հողալ անձնական մարրութեան վրայ, շուտ շուտ լողանալ բաղնիքում: Գետերում, համաճարակի ժամանակ չպէտք է լողանալ, որովհետև գետի ջուրը կարող է վերելից վարակուած լինել բացիլներով: Զուտ-շուտ պէտք է փոխել սպիտակեղէնը:

6) Մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել խմելու ջրի վրայ. ամենից անվտանգ պէտք է համարել աղբիւրի ջուրը, եթէ մաքուր տեղով է հոսում. սակայն զգուշութեան համար միան-

գամայն պէտք է ընդունել, որ խօլերայի ժամանակ ինչքան էլ մաքուր լինի ջուրը պէտք է եռացնել եւ յետոյ գործածել:

Գետերում լացք անելը պէտք է արգելի:

7) Բոլորովին հեռու պէտք է կենալ խրմիչքներից, մանաւանդ քեֆերից եւ արընլուց: Բաւականութեան համար կարելի է միմիայն մասամբ գործածել թթուաշ խմիչքներ, այն էլ եթէ եփած ջրով է պատրաստած: Գործածող եռացրած և պոպ ջուրը պէտք է հեռու պահել թէ հիւանդից և թէ այն ամենից, սրունց կպչելով կարող է վարակուել:

8) Խօլերայի ժամանակ ամեն ինչ կարելի է ուտել եթէ միայն եփած է եւ դերամարս, արգելում է ուտել ամեն տեսակ մրգեր, կանաչեղէն, եթէ նոյն իսկ նրանք լըւացուած լինին ջրի մէջ, որովհետև ջրով չի կարելի հեռացնել նրանց վրայի բացիլները— եթէ կան: Առհասարակ հեռու պէտք է լինել շափազանցութիւններից թէ ուտելու և թէ խմելու մէջ:

Խօլերայով հիւանդի սենեակում չպէտք է ուտել կամ խմել, որովհետև ինչքան էլ զգուշ լինիր, այնուամենայնիւ շէր կարող ապահով լինել բացիլներ կուլ տալուց:




9) Պետք է հագնել եղանակի համապատասխան, չմրսել, և մանաւանդ պէտք է տար պահել փորքը. նոյն իսկ փորի վերայ ցանկալի է միշտ ֆլանել կրել:

10) Զգոյշ պէտք է լինել *զանազան ժողովրդական միջոցներից*, ինչպէս էր կալզանը 1892 թ., զանազան լուծողականներից, սիրտ յետ բերող գեղերից և այլն. դրանք աւելի կթուլացնեն մարմինը և կը տրամադրեն վարակելու:

11) Ոչ մի փորացաւ չպէտք է անուշագիր թողնել խելիքայն ժամանակ և իսկոյն բժշկի դիմել:

12) Հաստատուում է որ ճանճերը եւ տարածում են խօրերան իրանց ստրիկի վրայ կը պաժ բացիլների միջոցաւ, երբ նրանք նստում են ուտելիքների վրայ. ուրեմն ամեն ջանք պէտք է պարժ գնել նրանց սշնշացնելու:

Չմոռանանք որ այս ծանր կուրս մէջ յաջողութիւն ունենալու համար, *պէտք է ամեն մէկս գործենք ընդհանրութեան համար*, իսկ ըստուրս մ'իտան մ'էկի համար. բաւական է որ այդ մէկը հիւանդանայ, ամբողջ գիւղեր, քաղաքներ և նահանգներ կորոզ են համաճարակի գոհ գաւնայ:



32031


ՄԵՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Վարչական (Administrative) 2
Քիմիական (Chemical) 2
Քիմիական (Chemical) 1
Գործարարական (Industrial) 3

Բուժարտոգրություններ (Medical Certificates)

ՄԱՐԿ ԵՎ ԳՆԱԿ

Իրիկ, ԱԵԿՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



35691

ՄԵՐ ԱԶԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փանտախա (սպառուած է) . . . 5 կտպ.
Գիֆանբրիտ 5 կտպ.
Տրախումա 5 կտպ.
Խօլերա (բ. տպ. սպառուած). . . 3 կտպ.

Գումարով գնողներին լինում է, զիջում:

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.

Գրմել՝ Александрополь,
Доктору Н. Теръ-Саакянъ

2013

«Ազգային գրադարան»



NL0074288

